



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԵԻ ՄԱՐԶԻ  
ԿԱԹՆԱՂՔՑՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԵԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք  
ԳՑ, Կոտայքի մարզ, գ. Կաթնաղբյուր, 0222-6-33-50, 077-843-043, kothaxbyur@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 24-Ա

**ՀԱՄԱՅՆԵԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՅԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարավելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016թվականի մայիսի 10-ի թիվ 5 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը

1. Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 14-ի N 22-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության մրցույթ կազմակերպելու մասին

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ

2. ՀԱՄԱԲՈՂՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

3. ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊՈՐԳԵԿ

4. ՄԿՐՏՅԱՆ ՆԱԵՐ

ՀԱՄԱՅՆԵԻ ՂԵԿԱՎԱՐ

ԶԱՅԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶԻ  
ԿԱԹՆԱՂՔՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կաթնաղբյուր, 0222-6-33-50, 077-843-043, katnaxbyur@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 25-Ն

**ԿԱԹՆԱՂՔՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՑ  
ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարովելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 14-ի <<Համայնքի բաղաբաշխական կանոնադրությունը հաստատելու մասին>> N 22-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԿԱՐՄՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԱՐԳԵԿ

4. ՄԿՐՏՅԱՆ ՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԸՍՁԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ



Հավելված  
 22 Կոտայքի մարզի Կաթնադրյուր համայնքի  
 ավագանու 2016թվականի մայիսի 10-ի N 25 Ն  
 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱԴՐՅՈՒՐ  
 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնադրյուր համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

- 1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:
- 1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:
- 1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

**II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԸՆԿՎԱԿԱՅՐԻ) ԶԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ԱԿՏԱԴՐՈՒԹՅՆԵՐԸ  
 (Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)**

- 2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:
- 2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

**III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԿԱ ՊԱՏՄԱՍԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՐԻՏԵՐԻԱՆՆԵՐԸ**

- 3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:
- 3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

**IV. ՊԱՀՊԱՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆՆԵՐ, ԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:
- 4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

**V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՂԱՔՈՒՄ ԽՐԱՆՈՒՄԿՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ԵՐԱՄՈՒՄԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ**

- 5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, ղեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դրների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնց պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

**1. Հենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները**

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը,

**2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվառոտիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները**

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

բ. համայնքն տպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,

գ. հաշվանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները,

**3. Լանդշաֆտին, այգեպարտկային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները**

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),

բ. այգեպարտկային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամադրեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),

գ. անհրաժեշտության դեպքում՝ ջամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ձաթատուկ, կանաչ ծածկույթների յուրականացում տեղակալ ավանդական տնկասյուրբերի տեսակներից տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ),



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԿԱԹՆԱԴՐՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնադրյուր համայնք  
ՀՂ, Կոտայքի մարզ, Գ. Կաթնադրյուր, 0222-6-33-50, 077-843-043, kathaxbyur@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
10 ՄԱՅԻՄԻ 2016թվականի N 26-Վ

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՀՈՂԵՐԻ ՎՈՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՅՑ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը տրամադրել վարձակալության մրցույթով և հաստատել հետևյալ նախնական վարձավճարը
  - 1) Վարձակալությամբ տրամադրվող 0.208647հա 07-034-0112-0017 կողի գյուղատնտեսական նշանակության հնդավոր հողը սահմանել տարեկան 5300(հինգ հազար) ՀՀ դրամ
  - 2) Վարձակալությամբ տրամադրվող 0.128745հա 07-034-0118-0008 կողի գյուղատնտեսական նշանակության հնդավոր հողը սահմանել տարեկան 3300(երեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ
  - 3) Վարձակալությամբ տրամադրվող 0.070686հա 07-034-0118-0009 կողի գյուղատնտեսական նշանակության հնդավոր հողը սահմանել տարեկան 1800(մեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ
2. Հողատարածքները տրամադրվում են առանց կառուցապատման իրավունքի՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով
3. Սույն որոշման ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -4

Դեմ -0      Ձեռնպահ -0

1. ԿԱՐՄՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ

2. ՀԱՄԱԲՈՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

3. ԴՊԱՏՆՆԻՄՅԱՆ ՊԱՐԳԵԿ

4. ԱԿՐՏՅԱՆ ՆԱԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԶԱՏԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

